



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԹԵՄԻՍ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Երեքշաբթի, 2 Դեկտեմբերին սկսեալ, ու շաբթուան տեւողութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մայրավանքին մէջ, Անթիլիաս, տեղի ունեցաւ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովը՝ Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի:

Վեհափառ Հայրապետին հրաւերով Անթիլիասի մայրավանք ժամանած էին Թեմակալ Առաջնորդները եւ Թեմերէն ընտրուած պատգամաւորները՝ մասնակից դառնալու համար Կաթողիկոսութեան գերագոյն օրենսդիր ժողովին:

Ազգային Ընդհանուր Ժողովը քննարկեց Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներու գործունեութիւնը, ապա նաեւ մշակեց յառաջիկայ տարիներու գործունեութեան նախագիծը: Ժողովի ընթացքին, զեկուցական բանախօսութիւններ ներկայացուեցան մեր եկեղեցւոյ հոգեւոր ու ազգային-կրթական ծրագիրներուն մասին:

Ծանօթ է որ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ու Ազգային երեսփոխանական Ժողովէն ընտրուած պատգամաւորներ մասնակցութիւն բերին այս ժողովին: Առաջնորդ Սրբազանը շաբաթասկիզբին Մայրավանք հասած էր Իտալիայէն, ուր մաս կազմած էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ընկերացող պատուիրակութեան, տեսակցութիւններ ունենալու համար Ն.Ս. Պենետիկտոս ԺԶ. Պապին հետ:

PRELATE AND DELEGATES PARTICIPATE IN THE CATHOLICOSATE GENERAL ASSEMBLY

On Tuesday, December 2nd, the General Assembly of the Catholicosate of Cilicia convened in Antelias, Lebanon under the auspices of H.H. Catholicos Aram I.

The Prelates and lay delegates from all Catholicosate Prelacies participated in the assembly.

Over the four day period, the activities of the religious and executive councils of the past six years were presented and evaluated. In subsequent sessions, a wide range of issues were discussed.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, arrived in Antelias on Monday to participate in the assembly. In the week prior, the Prelate was at the Vatican as part of the delegation of His Holiness on an official visit to H.H. Pope Benedict XVI.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԵՏԱԼԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ 20ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ ՀՈԳԵՅԱԼԳԻՍՏ ԵՒ ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ

Կիրակի, 7 Դեկտեմբերը Հայաստանի աղետալի երկրաշարժին 20-րդ տարելիցն է: Այս առիթով, Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ, Ս. Պատարագի աւարտին, հոգեհանգստեան յատուկ արարողութիւն պիտի կատարուի:

Նաեւ, կազմակերպութեամբ Հայաստանի Լոս Անճելըս հիւպատոսարանին, երեկոյեան ժամը 6-ին, Կլենտէյլ High School-ի հանդիսասրահին մէջ, տեղի պիտի ունենայ յուշ երեկոյ, նուիրուած երկրաշարժի զոհերու յիշատակին: Թեմիս հոգեւորականաց դասու եւ ժողովականութեան անդամները ներկայ պիտի ըլլան յուշահանդէսին:

COMMEMORATION OF THE 20TH ANNIVERSARY OF THE ARMENIA EARTHQUAKE

Sunday, December 7th, marks the 20th anniversary of the earthquake in Armenia. By the ordinance of the Prelate, special requiem services will take place following Divine Liturgy in all Prelacy Churches.

At 6:00 p.m. on the same day, a commemoration will take place at Glendale High School auditorium. The event has been organized by the Armenian Consulate General of Los Angeles.

Clergy and council members will be in attendance.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՄԱՆՈՐԻ ՁԵՌՆԱՐԿ

Նախաձեռնութեամբ Հայկական Համագումարին՝ Armenian Assembly-ին, Կիրակի, 7 Դեկտեմբերին, կեսօրէ ետք ժամը 5-ին, տեղի պիտի ունենայ կազմակերպութեան տարեկան տօնախմբութիւնը, Սթեյլա Տեր Ռոստոմեանի հիւրընկալութեամբ, անոր Կլենտէյլի բնակարանին մէջ: Ներկաները առիթը պիտի ունենան լսելու Արեւմտեան շրջանի գրասենեակին նոր նշանակեալ գործավարին՝ Եղիկ Զէշիշեանի զեկուցումը:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

ARMENIAN ASSEMBLY ANNUAL CHRISTMAS GATHERING

The annual Christmas gathering of the Armenian Assembly will take place on the afternoon of Sunday, December 7th, at the home of Stella Der Rostomian in Glendale. During the gathering, guests will have the opportunity to hear from newly appointed director of the Western Region Yeghig Keshishian.

Pastor of Holy Cross Cathedral Rev. Fr. Ashod Kambouria will represent the Prelate.

Ի ՊԱՏԻՒ ՏԻԿԻՆ ԱԼԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Կազմակերպութեամբ Փասատինայի Հայ Դատի Յանձնախումբին, Կիրակի, 7 Դեկտեմբերին, կեսօրէ ետք ժամը 5-ին, Փասատինայի Հայ Կեդրոնին մէջ տեղի պիտի ունենայ ընդունելութիւն մը, ի պատիւ Փասատինայի հանրային մարզի կրթական համակարգի ընդհանուր պատասխանատու Տիկին Ալիս Պետրոսեանի, որ աւելի քան 30 տարիներէ ի վեր կը պաշտօնավարէ կրթական մարզին մէջ:

Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոեգւոր հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պապօշեան, իբրեւ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցիչը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

WELCOMING RECEPTION FOR MRS. ALICE PETROSSIAN

The Armenian National Committee Pasadena chapter has organized a welcoming reception for Mrs. Alice Petrossian who was recently appointed Chief Educator Officer of the Pasadena Unified School District. The reception will take place on the afternoon of Sunday, December 7th, at the Pasadena Armenian Center.

Pastor of St. Sarkis Church Rev. Fr. Khoren Babochian will represent the Prelate.

ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Երեքշաբթի, 2 Դեկտեմբերի երեկոյեան, կազմակերպութեամբ Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան, տեղի ունեցաւ Հաստատութեան տարեկան ճաշկերոյթը, «Ռընեսանս» ճաշարանի մէջ, Կլենտէյլ:

Այս տարի, Վահան Եւ Անուշ Շամլեան Ազգային Վարժարանը, որպէս կրթական հաստատութիւն, որ մեծ վաստակ ունի մեր մատղաշ սերունդին

հայեցի կրթութիւն ջամբելու մէջ, իբրեւ «Տարուան Կրթական Զաստատութիւնը», յատուկ գնահատանքի արժանացաւ: Նմանապէս՝ Դոկտ. Օննիկ Զայրապետեան, իբրեւ «Տարուան Կրթական Գործիչը», գնահատանքի արժանացաւ՝ իր բեղուն վաստակին համար:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Կոմիտաս Բիւյ. Թորոսեան ներկայ եղաւ ձեռնարկին եւ փոխանցեց Առաջնորդ Սրբազանին օրհնութեան եւ գնահատանքի խօսքը:

DAVIDIAN AND MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION ANNUAL BANQUET

On the evening of Tuesday, December 2nd, the annual banquet of Davidian and Mariamian Educational Foundation took place at Renaissance banquet hall in Glendale.

At this year's banquet, Vahan and Anoush Chamlian School was honored as "Educational Institution of the Year" and Dr. Onnig Hairabedian as "Educator of the Year".

Rev. Fr. Gomidas Torossian attended and conveyed the Prelate's blessings and remarks.

ՄԱՅՔԸԸ ԱՆԹՈՆՈՎԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ՄՏԱՆՁՆՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Երկուշաբթի, 1 Դեկտեմբերի առաւօտեան, Լոս Անճելըսի Բաղաքապետութեան Խնամակալութեան գրասենեակին մէջ, տեղի ունեցաւ Supervisor Michael Antonovich-ի վերընտրութեան երդման արարողութիւնը, որուն յաջորդեց հիւրասիրութիւն:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Ազգ. Առաջնորդարանի Կրօնական Ժողովի ատենապետ եւ Բրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ եղաւ արարողութեան: Ներկայ էր նաեւ Արժ. Տ. Վազգէն Բիւյ. Աթմաճեան: Անոնք շնորհաւորեցին Լոս Անճելըս գաւառի վերընտրեալ վերահսկիչը եւ յաջողութիւն մաղթեցին իր ծառայութեանց մէջ:

OATH OF OFFICE CEREMONY OF SUPERVISOR MICHAEL ANTONOVICH

On the morning of Monday, December 1st, the Oath of Office Ceremony for Los County Supervisor Michael Antonovich took place at the Kenneth Hahn Hall of Administration in Los Angeles. The ceremony was followed by a reception.

Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Fr. Vazken Atmajian attended on behalf of the Prelate and wished the Supervisor success in his service.
